


Ի պէս

Վազգեն Բրուտեան



Ղապերգութիւն

Գ

3

ՂԱՏ

Յարիւթիւն Պէրպէրեան

6

ԴէՊԻ ԾՈՎ ՏԱՆՈՂ ՓՈՂՈՅԸ

Նորվան

9

ՋՈՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ս. Դ. Գրիգորեան

10

* * *

Սոնիա Սանան

15

ԵՐԵՔ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Լիլիթ Քեչիշեան

18

METAMORPHOSIS

Մարուշ Երամեան

21

ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Արա Գազանճեան

36

ՍԱՐԴԻ ՍԱՍԻՆ

Նորվանուրգէն Արզումանեան

Խմբագրեց՝ Էլիզաբէթ Գրիգորեան
E teb • 2354 Pennerton Dr. • Glendale, • CA 91206
eteb@earthlink.net • www.eteb.com
© 2009 E teb

~ ՂԱՏ ~

կը երգ կ'երգէ
 բեմին վրայ
 որդեգրելով լեզու մը որ
 հասկնալի է բոլորէն
 գէթ առաջին մակարդակին
 (էջին վրայ կը վերածուի նշանագրի°)
 պլա պլա պու պի պլու պա պլի պա
 վեր վեր վար վեր
 վար վար վեր վար
 ատկէ անդին կը սիրերգէ°
 յղացք մը որ բաց է ամբողջ
 ամբողջովին
 եւ յոտնկայս բան կը բանայ
 տարբերակներ խոր ձայնային
 խորհրդաւոր անլուծելի
 ստեղծող ի՞նչ

տաղ տաղերգող հէյ կաքաւիկ
 մատ մատ մատնող
 ներքին խռովք
 տա՞մ քեզ նուէր
 մտիր ներքին հիւսկէններուն վարար ձայնին
 ձգտումներու միտումներու այս խառնուրդին
 բացուածքեան մէջ ազատարար
 շնչէ ազատ
 տար տառեր վառ
 խլուած շահուած
 բաց երախէն մուծ տարբերքին
 տորոն որդան կարմիր այրող

~ 3 ~

կամ բռնկած լեզուին վրայ
 այրող գօտի (լա՛ւ այրեցեալ)
 տարաշխարհիկ պտուղներու
 կեղեկներուն մէջ փաթթուած
 փնտռող իմաստը բառերուն
 անհեթեթին մէջ այս հսկայ
 կապող հնչիւնը բառին հետ
 կամ մէկ այլ տարբեր
 համաձայնական հասկացողութեան

տաղ շրջուած
 տ ա ը տ ղ ն ու ա ծ
 լեզուին նման
 զայն գործածող մարդոց տակաւ
 անդիմացող

հուր հոն հոսող իրմէ քեզի
 ձայնէն եկող հին կախարդանք
 յուռուծք հմայեակ
 լեզու որ քեզ դեռ կ'աքսորէ
 այլուրային տեղ մը եզրին
 որմէ անդին մղձաւանջն է կորուստներու
 անցում լեզուի մը շատ տարբեր
 շրջապատէն անհասկնալի կամ հասկնալի°
 որու փշածածկ շրջագծին մէջ
 մէկ այլ օտարում կը սպասէ քեզի

յիշատակդ այս գիշեր ոչ մէկ ձեռով կը յուզէ
 կարծես ջնջուած ես մտքէս ոչ մէկ ատեն դուն կայիր

բառ բռնաբարուած

~ 4 ~

բռնի թխմուած կոկորդդ ի վար
բայց սէր քեզ կ'երգեմ
այդքան համարձակ աներեսօրէն
կ'երփեղկուիմ քեզի հետ
կը հասունամ եւ կը հասնիմ քեզի հետ
հետ յետ քեզի հետք անհետք
յատակագծի ան նշան

կը ջրվիժի ձայնը շարունակ
թքած բոլոր եւ բոլորի կարծիքներուն
իր հարազատ տաղը կ'երգէ
կամ կը փնտռէ
միշտ անձկութեան սահմաններուն
ուր պրկումը կրնայ հասնիլ
փրթելու կամ կտրուելու աստիճանին
լեզուին նման բզկտուած

բայց ձգախէժ են բառերը
հնչիւնները ձիգ ու իրաւ
կապող բռնող համբոյրի պէս
եւ բռնկող բերնէ բերան

տարբերակներ գորս
չըջումին հետ պէտք է ընտրես

ահա կը մտնես ձեռներէցօրէն
ձայներէցօրէն
ձայնաթելերով հիւսուած քօղին տակ
ծիածանող քեզ
ծին ծնծիղ ծնծղայ

Յարութիւն Պերպլեան

~ 5 ~

~ ԴԷՊԻ ԾՈՎ ՏԱՆՈՂ ՓՈՂՈՅԸ ~

Մեյամաղձոտ չեմ,
անրուժեղի հիւանդութեամբ էլ չեմ տառապում
(առայթմս),
բայց երբ տրամադրութիւնս ընկնում է,
փողոց շարտուած լուտանքի նման
դուրս եմ պրծնում, բայց ոչ հեռու...
ուր էլ գնաս երկիրը կտրէ,
միմեանց... չենք հասնի:
Փողոցները նոյնն են,
մայրուղիները մշուշոտ, անվերադարձ,
ինչպէս բոլոր պատուոյ շքանշանները,
որոնք ի վերջոյ, մանրավաճառի խանութ են
հասնում.
ուղիներից մէկն էլ, ասում են,
դէպի նիրուանա է տանում,
բայց ինձ հերիք է հէնց այս մի կեանքը,
դա էր պակաս, որ նիրուանայի ճանապարհին
վերածուէի խոզի, խլիքի, դաշտամկան...

Մահը վաւաշոտ ցանկութեամբ
քնում է բոլորի հետ...
Քամին գնալն է խորհրդանշում,
կեանքը՝ գնալը,
գալը՝ գնալը,
եւ վախն իմ տունն է.

ինձնով լի փողոցը մայթին չի հասնում,
միշտ էլ մէկը շուտ է հասնում, միւսը...

~ 6 ~

Միշտ էլ մի փողոց ինձ դէպի ծով է տանում,
դէպի այն մայրամուտը,
երբ անունս շալակս առայ
ու ինձ վռնդեցի փողոց-
յիմար էի, ուզում էի աշխարհի չորս պատերը ետ տանել,
այնքան, որ մի տեղ գտնեմ՝ սիրուց, սիրելուց
եւ այլ թշնամիներից ազատ...

Նորից արթնանում եմ բոլոր նորիցների նման,
եւ լուսաբացից իրիկուն ոչինչ չի պատահում,
բացի ազուաւի անհանգիստ կռկռոցը,
ու նորից մի քիչ մեռնում եմ այն գերեզմանոցում,
որ տուն է, աշխատավայր, համալսարան ու սրճարան,
եւ հիմա այս ազդանշանների ու
մեքենաների ոռնոց-բղաւոցում,
այսքան թերահաւատ փողոցներում
ինչպէ՞ս ինքս ինձ կարօտեմ,
հիմա մէկը չկայ, որի հետ միայնակ մնամ,
չկայ մէկը, որից հեռու միայնակ մնամ,
ու պիտի վազեմ տաքսու ետեւից,
որում թողեցի վերջին բանաստեղծութիւնս...
Ճամբ քանի՞սն է,
դարձեալ ուշացայ,
եւ որքան է ուշանում այս աղջիկը,
ու՞մ կորցնում եմ դէպի ծով տանող ճանապարհին,
ու միշտ էլ մի փողոց քեզ դէպի ծով է տանում...

Նորվան

~ ՉՈՐՍ ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆ ~

ԳՈՅԱՐՄԱՏ

Գոյութիւնս է արմատաւոր
Պինդ ու ամուր

Դարերուն հետ հաշուի նստող
Երկայնամիտ

Գետնին տակէն նոր գետիներ յայտնաբերող
Տիեզերքին սրտին վազող

Տէրունական աղօթքին պէս քաղցր ու հեզիկ
Մարդեղէն գոյ-ն արմատիս

ՍՐԱՐՇԱԻ

Սո՞ւրս է ելած արշաւի
Թէ արշաւս է սրածայր
Արշաւասոյր այս կեանքին

Ուր օրերս չունին հաշիւ
Ոչ այսօրուան
Ոչ գալիքին

Բայց սուր մը կայ տեղ մը կախուած
Ճօճական
Զ-արշաւական

Սուրը մահուան հրեշտակիս

ՄԱԶԱՊՈՒՐԾ

Միլիոններով մագեր պրծան
Անէացան

Պուրծն ալ մագ-մագ տեղի տուաւ
Թուրք հորդաներուն ընդառաջ

Միայն մեծ հայրս մագապուրծ եղաւ
Տէր Զօրէն ի Լիբանան

ՎԵՐՁԱԼՈՅՍ

Լոյսին վերջը չէ
Այլ
Վերջը լոյս է

Ինչպէս սէրերս

Երբ որ վերջանան
Լոյս մը կ'արձակեն
Ինձմէ ներս թէ դուրս

Կեանքի ալիքին հունը կը փոխեն
Հաւատքի մ'հանգոյն

Դէպ նոր վերջալոյս

Ս. Դ. Գրիգորեան

~ * * * ~

տանկ
տանկ
տանկ

մարմինիս մէջ
գիւղը
մեռել կը հոտի
ու չպարուած կոպերուս տակ քաղքենի
գերեզմաններ կը փորուին

մեռելներու կղզի դարձաւ Այնճարը
լերան կողին
փշոտ փէշին
ամուր սեղմած իր պատմութեան
հպարտ անպարտ անունը
յուշատետրակ
ալպոմ միայն
քեռիներուս եւ մեծերուն ժպիտներով
կաղանդի ծառ ու ծաղկազարդ
եւ քիչ մըն ալ հանդէս մանդէս
վկայական եւ ընկերներ
որոնք այսօր չեմ գիտեր ուր
ո՞ր դարակին կամ ո՞ր տուփին
մոռացութեան տակ ընկղմած
ինքնութեանս շատ կարեւոր գաղտնիքը
ոսկիի պէս դեռ կը պահեն
- աման ճանրմ
եղածը գիւղ մըն է
ան ալ Այնճար

կիրակիները Արային սրճարանը ձուկի կ'երթայինք
ի՛նչ համով ձուկ էր
մինչեւ Այնճար կը քշէինք թրուկիթ ուտելու
վերջն ալ
լուրկի ջուր-պիպերի ջուր
պանիրով հաց եւ չինկիլիչ...
ուռնգերս մեծ
օգոնին չափ
խորունկ ու մեծ կը բանամ
Ատլանտեանի ջուրերուն մէջ
մտքի ուռկան կը նետեմ
կը սուգուկիմ խոր, քանի մեթր մի՛ հարցնէք
ոստրէները բարեւ կ'ըսեն Վեհանոյշին քնքոյշ ձայնով
խեչափառներ ցաւագրկող դեղի նման
կը մկրատեն
նորէն ի՞նչը մի հարցնեք
քարիտէզներ ափերուս մէջ առատ-առատ կը լեցուին
Հայկարանի տխուր հինցած պատմութիւնը
կրկին անգամ գրելու
ո՞ր պատմութիւնը
բոլորդ ալ վստահ եմ որ կարդացած էք
ու կը լրդամ
Քարաչիի ջուրերուն փոքրիկ նիհար ձկնիկներուն երագով
դաստակներուս արծաթ պղինձ ապարանջան
մասնեմատիս սիրոյ օղակ եւ խենթութիւն
ես կը հասնիմ Կասփէզիի խոնաւ ափին
ու չրխկ կ'ընեմ Յարութիւնին գաւաթին
չոր արեւուն
կիզիչ այրող արեւուն տակ կը պառկիմ
ու ոտքերուս այրող մորթին
ambre solaire կը քսեմ

այդ օրերուն
ճերմակ եւ աղուամագոտ ոտքերով պասքէթ խաղալը
ամօթ էր
մէկ գաւաթ շաքարին մէկ դգալ լեմոն տուզու
լաւ պիտի խառնես որ չփակի տապակին
ու պիտի փռես պաղ մարմարին մինչեւ պաղի
մէկ վար մէկ վեր
բթամատի ցուցամատի սեղմումով
մամ, կամաց, ոտքերս պիտի կապուտնան
մամ, կամաց, ցաւը ոսկորներս պիտի փշրէ
մամ, մամ
- քիչ մը դիմացիր
աս ալ ցա՞ւ է
ցաւը վերջը
երբ աչքերուդ փոսիկներէն մեռելները անունդ տան ու
քեզ կանչեն
ան-վայրութեան
ամալացած
մարմնին վրայ
դրօշակ մը պարզելու
ցաւը վերջը
երբ ջուրերուն աղի գանգուռ գգուանքին տակ
գիւղին կանաչ
երբեմն ալ չոր ու ցամաք
դաշտերուն մէջ պառկիլ ուզես
եւ չգտնես
հողի բխրուն պատառիկ մը
ու մայթերուն ծայրը նստած
stella-ի գինովութեան յանձնուիս
stellaaaaaaaaaaaaaaaaaaaaaaaa
ո՞ւր կը տանիս գիս թրամվայ